



“ԹՈՂ ՏՈՒՔ ՄԱՆԻ ԳՆՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ” ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ Ժ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆՈՒԱՐ 1, 1881

ԹԻՒՆ 4



ՏԱՔ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ՏՈՒՆԿԵՐ ԵՒ ԹՈՉՈՒՆՆԵՐ ՊԱՀՆԵՆՈՒ ՏԵՂ

Ամեն երկիր ունի իրեն յատուկ տունկեր և անասուններ որ չեն գըտնուիր ուրիշ տեղ: Կան երկիրներ, որ պիտի են հասարակածին մօտ գըտնուածները, ուր օգը շատ տաք է, և կան երկիրներ, որ պիտի են սառուցեալ գօտիներու մէջ գտնուածներն, ուր շատ ցուրտ է: Անասունը և տունկըք որ կ'աճին տաք երկիրներու մէջ, չեն կրնար ապրիլ ցուրտ երկիրներու մէջ: Այս պատճառաւ մարդիկ յատուկ շէնքեր կը շինեն տաք երկիրներու յատուկ տունկեր հասցնելու և այնպիսի երկիրներու յատուկ թռչուններ պահելու համար: Այսպիսի շէնք մը կը տեսնուի նախորդ պատկերին մէջ: Այստեսակ շէնքեր կը շինուին փայտէ կամ քարէ, երբեմն նաև երկաթէ, և ունին շատ պատուհաններ լոյս ընդունելու համար:

Այս շէնքերը կը շէնուցուին տաք շուրով կամ շոգիոժ որ խողովակներով սենեակները կը տարուի: Գուրա ձմերան ստեն անգամ այսպիսի շէնքի մը մէջ կը տեսնես գեղեցիկ ծառեր և ծաղիկներ որ երբէք չեն գտնուիր բայց օգի մէջ, նաև գեղեցիկ թռչուններ որ տաք երկիրներու յատուկ են: Բարիզի և Լոնտոնի մէջ այս տեսակ քանի մը շատ գեղեցիկ շէնքեր կան յորս կը գտնուին հազարաւոր տունկեր և թռչուններ:

ՀԻՒՍԻՍԱՅՈՒՆ ՔՅԻՆՈՒ

Չմեռն եկած հասած է, և շատ կողմեր արդէն ձիւնով ծածկուած են: Այս երկրին բնակիչք երբեմն կրնեղ ուին սաստիկ ցուրտէ, սակայն և այնպէս դժուարաւ կրնան հասկնալ թէ որչափ սաստիկ է սառուցեալ գօտիներուն ցուրտը: Հիւսիսային Ամերիկայի Լաբլանտայիք և Եսքիմացիք բնակուած են անասուններու մորթ և մուշտակ հագնել, ինչպէս հագած են

վերի պատկերին մէջ տեսնուած մարդը, կինն և տղայն, և բնակել մորթէ վրաններու կամ ձիւնէ և սառէ հիւղերու մէջ: Առոնք կ'ապրին մեծաւ մասամբ ձկան, փոկի, և բէն կոչուած տեսակ մը եգիսիկի մասով:

Շատ տարիէ հետէ Անգղիոյ և Ամերիկայի միացեալ նահանգաց մէջ մարդիկ կը փափաքին տեղեկութիւն ստանալ հիւսիսային բևեռին մօտ գտնուած երկիրներու վրայ, և շատ անգամ ծովէն և ցամաքէն մարդիկ զրկուած են այն կողմերը քննելու: Բաւական տարիներ առաջ Սըր ձոն

թութենէ կորսուեցան: Միացեալ նահանգաց նաւային պաշտօնակալներէն մին որ Սըր ձոն Ֆրանքլինի և անոր ընկերաց հետքերը գտնելու համար խուզարկութեան գացած էր, յաջողեցաւ իր նպատակին հասնիլ, և քանի մ'ամիս առաջ դարձաւ ուղևորութենէն: Յիշեալ պաշտօնակալը քանի մը ընկերներով ելաւ Հուտտոնի ծոցին հիւսիսային եզերքն, և իր հետ քիչ մը պաշար առնելով աւելի քան տարի մը ճամբորդեց այն ցուրտ երկրին մէջ: Այս անձն և անոր ընկերները սորվեցան ուսել այնպիսի կերակուրներ զորս կ'ուսէին Եսքիմացիք, և այսպէս պատեցան այն նեղութիւններէն զոր կը զգան Եսքիմացիք երբ անոնց սովորական կերակուրները կը պակսին: Պաշտօնակալը գտաւ տեղն ուր Ֆրանքլինի նաև որը մնացած էին ստուի մէջ, գտաւ նաև Ֆրանքլինի մարդերէն շատերուն գերեզմաններն և բերաւ շատ նշխարներ անոնցմէ: Նաև գտաւ Եսքիմացիներ որ տեսած էին Ֆրանքլինի մարդիկն անոնց նաւերը սառելու մէջ մնալէն ետքը, և որոնք պատմեցին թէ այն մարդիկ ինչպէս նեղութիւն կրեցին անօթութենէ և հիւանդութենէ: Երոպայի և Ամերիկայի մէջ մարդիկ դեռ կը ջանան ճամբայ գըտնել հիւսիսային բևեռն



Ֆրանքլին անուն Անգղիացւոյն հրամանատարութեամբ խուզարկուներ Անգղիայէն ճամբայ ելան Կրինլէնտ երթալու շատ զօրաւոր նաւերով յորս կար երեք տարուան պաշար: Բայց այն նաւերուն պաշտօնակալներէն կամ նաւաստիներէն ոչ ոք ետ դարձաւ: Ուրիշ խուզարկուներ զրկուեցան տեղեկութիւն ստանալու թէ ինչ եղած էին Սըր ձոն Ֆրանքլին և անոր ընկերք: Քանի մը տարի ետքը հասկըցուեցաւ թէ անոնց նաւերը սառելու մէջ մնացին Հուտտոնի ծոցին հիւսիսային կողմը, և մարդիկն իրենց բոլոր պաշարը հատցնելով ցուրտէ և անօ

թութենէ կորսուեցան: Միացեալ նահանգաց նաւային պաշտօնակալներէն մին որ Սըր ձոն Ֆրանքլինի և անոր ընկերաց հետքերը գտնելու համար խուզարկութեան գացած էր, յաջողեցաւ իր նպատակին հասնիլ, և քանի մ'ամիս առաջ դարձաւ ուղևորութենէն: Յիշեալ պաշտօնակալը քանի մը ընկերներով ելաւ Հուտտոնի ծոցին հիւսիսային եզերքն, և իր հետ քիչ մը պաշար առնելով աւելի քան տարի մը ճամբորդեց այն ցուրտ երկրին մէջ: Այս անձն և անոր ընկերները սորվեցան ուսել այնպիսի կերակուրներ զորս կ'ուսէին Եսքիմացիք, և այսպէս պատեցան այն նեղութիւններէն զոր կը զգան Եսքիմացիք երբ անոնց սովորական կերակուրները կը պակսին: Պաշտօնակալը գտաւ տեղն ուր Ֆրանքլինի նաև որը մնացած էին ստուի մէջ, գտաւ նաև Ֆրանքլինի մարդերէն շատերուն գերեզմաններն և բերաւ շատ նշխարներ անոնցմէ: Նաև գտաւ Եսքիմացիներ որ տեսած էին Ֆրանքլինի մարդիկն անոնց նաւերը սառելու մէջ մնալէն ետքը, և որոնք պատմեցին թէ այն մարդիկ ինչպէս նեղութիւն կրեցին անօթութենէ և հիւանդութենէ: Երոպայի և Ամերիկայի մէջ մարդիկ դեռ կը ջանան ճամբայ գըտնել հիւսիսային բևեռն

թութալու, և թէ և մինչև ցարդ յաջողած չեն, բայց հաւանական է որ պիտի յաբատեն մինչև որ հասնին իրենց նպատակին: Արդարև չենք կրնար չօքանչանալ այնպիսի մարդոց վրայ որ անօթութիւն, ցուրտ և մինչև իսկ մահ այք առնելով կ'ընեն այսպիսի ձեռնարկութիւններ:

ՎԱՐՈՒՅ ՄԻԱԿ ԿԱՆՈՆԸ

«Երբորս արդէն ինչ մտրէ իր ճամբան, ու իստիք համեմատ անոր գիտելութիւն ընելով:»
Հարիւր իննևտասներորդ Սաղմսին այս համարը ոչ միայն երկտասարդաց,

այլև ամէն պատանուց և տղայոց համար է : Բայց որովհետև այս թերթը գլխաւորապէս տղայոց համար է, ահա նենք թէ տղայոց համար ի՞նչ մասնաւոր նշանակութիւն ունի Սուրբ Գիրքին այս խօսքը :

Տղայ մը ի՞նչպէս կրնայ մտքուր և բարի վարք ունենալ իւր բոլոր կենացը մէջ : Նախ կ'ըսենք թէ ամէն տղայ պարտի այս հարցումն ընել ինք իրեն : Դուք, տղայք, ձեր այս հասակին մէջ կրնաք ճանչնալ բարին և շիտակը, ուստի պարտիք խորհիլ, ոչ թէ ձեր օրերը զուարճութեամբ և զբօսանք անցունելու միջոցներուն վրայ, թէ պէտ զուարճութիւն և զբօսանք ևս հարկաւոր են ժամանակին, այլ նախ ուսման մէջ յառաջ երթալու միջոցներուն վրայ, և ապա, մանաւանդ, սա մեծ խնդրոյն վրայ, թէ ի՞նչ ընելու էք որ Աստուծոյ և մարդոց օգտակար անձինք ըլլաք ձեր բոլոր կենաց մէջ, և, զինի մահուան, Աստուծոյ հետ ըլլաք յախտեան : Կը յուսամ թէ ձերնէ շատերը կ'ընեն իրենք իրենց այսպիսի հարցումներ, և տալալոյս չունիմ թէ, եթէ մինչև ցարգ չըրիք, հիմա պիտի ընէք սա հարցումը . « Ինչո՞վ մտքերեմ իմ ճամբաս : »

Առաքինութեան առաջին քայլն է առաքինութեան պէտքը ճանչնալ :

Հիմա զնենք թէ այս հարցումը կ'ընէք դուք ձեզի . « Ինչո՞վ մտքերեմ իմ ճամբաս : Ի՞նչ վարք ունենալու եմ : » Այս հարցումնց պատասխանը կը կարգանք վերի համարին մէջ : « Բոլոր խօսքիդ համեմատ անոր (ճամբուն) զգուշութիւն ընելով : »

Ուրեմն զգուշանալու էք ձեր ճամբաներուն : Շատ տղայք, նաև չափահաս մարդիկ, կը սխալին յայտմ, որ պատմութիւնն զնէն իրենց ճամբաներուն : Կ'ընեն ինչ որ իրենց անտրտակը կամ կիրքը կը թելադրէ : Թիթեռը կը թռչի ծաղիկէ ծաղիկ, կը ծծէ ծաղիկին հիւթը, բայց չի պահեր, ուստի և երբ ձմեռը կու գայ, չունենալով պաշար՝ կը մեռնի : Բայց ժիր մեղուն ցուրտ եղանակին համար կը պատրաստէ իրեն առատ պաշար : Մեղուն զգուշութիւն կ'ընէ իւր ճամբուն : Տղայոց մեծ մասը կը վարուի մանաւանդ թիթեռն քան մեղուի պէս : Այո, շատ տղայք կը գործեն ըստ թելադրութեան : Եթէ թելադրութիւնն ըստ պատահման բարի է, արդիւնքը կ'ըլլայ քիչ շատ բարի, ապա թէ ոչ չար է հետևանքը :

Դուք, տղայք, պարտիք խորհել թէ ինչպիսի կեանք վարելու էք, և

ի՞նչ պիտի ըլլայ ձեր վախճանը, եթէ ձեր այժմու ճամբով յառաջ երթաք : Պարտիք հարցունել . « Ի՞նչպէս կրնամ ուղղել վարքս : Ի՞նչ ընելու եմ որ հաճոյ ըլլամ Աստուծոյ : »

Նաև այս հարցման մէջ կ'օգնէ ձեզի Սուրբ գիրքին վերոյիշեալ խօսքը : Այն խօսքին համեմատ պարտիք զգուշութիւն ընել ձեր ճամբաներուն : Եթէ կ'ուզէք ձեր բոլոր կենաց մէջ մտքուր ճամբով երթալ, եթէ կ'ուզէք որ ձեր վարքն ըլլայ ինչպէս պատշաճ է, պարտիք կանոն ընել ձեզի ինչ որ Աստուած կը պատուիրէ Սուրբ գիրքին մէջ : Սուրբ գիրքը չափահաս մարդոց համար միայն չէ, նաև տղայոց համար է :

Առաջին բանը զոր Սուրբ գիրքը կը սորվեցնէ՝ այս է . Ամէն մարդ մեղաւոր է և թողութեան կարօտ : Երկրորդ բանը զոր կը սորվեցնէ այս է . Քրիստոսի հաւատացողին մեղքը կը ներուի : Եթէ, Աստուծոյ խօսքին համեմատ, զգուշութիւն կ'ընես քու ճամբուդ, խոտովանելու ես մեղքերդ, զգջալու ես անոնց վրայ, և ներում ինդրելու ես անոնց համար : Այսպէս ընելով կը մտքես քու ճամբուդ :

Արդ, եթէ ամէն օր կարգաս Սուրբ գիրքը, կրնաս սորվիլ թէ ի՞նչպէս պիտի մտքես ճամբուդ : Քանզի Աստուծոյ խօսքը սրուած է սորվեցնելու համար մեզի թէ ի՞նչպէս ապրելու ենք : Մեր վարքը չտկելու ուրիշ կանոն չկայ : Չենք կրնար մտքել մեր ճամբան, և ոչ մտքուր պահել զայն, բայց եթէ զգուշութիւն ընելով մեր ճամբուն Աստուծոյ խօսքին համեմատ :

« ՀՈԳՍ ԶԷ »

Քանի մը տարի առաջ հանճարեղ տղայ մը կու գար դպրոցէն շատ ուշ, քանզի վարժապետն արգելած էր զնա դպրոցը յանցանքի մը համար : Երբ տղան կ'երթար ճամբան, բարեկամ մը որ տղայոց օգնել կը սիրէր՝ հանդիպելով անոր՝ ըսաւ . « Կը ցախիմ որ այսպէս ուշ կը դառնաս դպրոցէն » : Տղան անհոգ և անվայել կերպով ըսաւ . « Հոգս չէ » :

« Այս տղան », կ'ըսէ այս պատմութիւնն ընող անձը, « ես շատ աղէկ կը ճանչնայի : Անոր հայրը և մայրը ծանօթ էին ինձ : Ասոնք բարի մարդիկ էին . ամէն աշխատութիւն և նեղութիւն յանձն առած էին իրենց որդւոյն կրթութեան համար, և տղան հանճարեղ էր քան զամենայն աշա-

կերտակիցս իւր : Եթէ ջանար, կրնար իւր գափին մէջ առաջին ըլլալ, բայց անվայել էր » :

Այս տղուն հասակին հետ աճեցաւ նաև անհոգութեան ոգին, և վերջապէս հայրը հանեց զնա դպրոցէն և դրաւ արուեստաւորի մը քով : Բայց տղան յառաջ չգնաց հոն, վասն զի ամենևին հոգ չէր ընել հաճոյ ըլլալ իւր գլխաւորին : Հոն ժամանակ մը մնալէն ետքը, վաճառեցաւ : Ինք դարձեալ հոգ չէր ընել, բայց հայրը, մայրը, քոյրը հոգ կ'ընէին, և անոր վաճառելուն համար շատ արտասուք թափեցին : Ժամանակ մը ետքը տեսայ որ այն տղան ցնցոտիներ հագած էր և բոկոսն իշավարութիւն կ'ընէր : Այնուհետև քանի մը տարի շտեպ այն տղան և լուր չառի անկէ, բայց վերջապէս լսեցի որ նա մը մը տած էր նաւատի ըլլալու համար, և մեկնած էր հեռաւոր երկիր մը երթալու : Նաև մէջ ալ անհոգ և անվայել էր, ուստի երբ նաև հասաւ նաւահանդիստը, նաւապետը վաճառեց տղան : Այս տղան քանի մը ամիս այն օտար երկրին մէջ թափառական պտտելէ ետքը տենդի բռնուելով մեռաւ և թաղուեցաւ հոն : Շատ յարմար է այն տղուն գերեզմանին վրայ արձանագրել սա խօսքերը : « Աստ հանգչի տաղանդաւոր տղայ մը որ ժամանակէն առաջ գերեզման իջաւ, քանզի 'Հոգս չէ' ըսելով անվայել էր ուսմունք և արհեստ սորվելու » :

ԲԱՐԵՍԻՐՏ ՏՂԱՅ ՄԸ

Սիրելի տղայք, մտաբեր ձեզի երկու մանկանց, կարողուս անուն տղու մը և Էմէլի անուն աղջկան մը, պատմութիւններն ըրի, և կը յուսամ որ դուք այն պատմութիւնները ուշադրութեամբ կարդալով օգուտ քաղեցիք, և քաջախելոցեցաք քայլ մ'աւելի յառաջ երթալ հնազանդութեան և ուղղութեան շաղկին մէջ : Այս անգամ պիտի պատմեմ ձեզ Արդուր անուն տղու մը բարեօրութիւնն յորդորելով զձեզ որ անոր բարի օրինակին հետեւելու ջանաք :

Արդուր օր մը կը դառնար դպրոցէն, և ճամբան հանդիպեցաւ գրեթէ մերկ տղու մը որ մտմտեղ կու լար : Արդուր հարցուց այն տղուն լալուն պատճառը, և տղան հեկեկալով սա պատասխանը տուաւ : « Անօթի եմ, և ստակ չունիմ որ հաց գնեմ » : Արդուր յառաջ տարաւ իւր հարցումն ըսելով . « Ինչո՞ւ անօթի ես, մայրդ կերակուր

չառա՞ւ քեզ :” Խեղճ աղան պատասխանեց . “Մայրս ալ բան չունի որ տայ ինձ ուտելու , նաև մայրս հիւանդ է և չկրնար անկողնէն ելլել :” Բարեւ սիրան Արդուր հարցուց անոր , “ Հայրդ ո՞ր է :” Տղան ըսաւ . “ Հայր չունիմ , հայրս ծովը խեղդուած է :” Արդուրի սիրան աւելի ևս յուզուեցաւ այս պատասխանին վրայ , և ուզեց գիտնալ թէ ո՞ր կը բնակէր այն խեղճ աղան : Տղան նեղ փողոցի մը մէջ հիւզ մը ցուցնելով ըսաւ . “ Ահա այս է մեր տունը :” Արդուր ըսաւ տղուն , “ Ետեւէս եկու , ես քեզ բան մը պիտի դնեմ ,” և աղան գնաց անոր ետեւէն : Արդուր իր գրպանն ունէր քիչ մը ստակ , և այս ստակով հաց մը գնելով սուսաւ տղուն , և ուզեց անոր հետ ի միասին տունը երթալ : Երբ տունը մտան , Արդուր սենեկին մէջ տեսաւ կին մը որ պառկած էր անկողնոյ մէջ , և կնոջ երկու կողմն երկու տղայք կու լային հաց խնդրելով : Տղայքն երբ տեսան զԱրդուր գաղբեցան լայէ , և տղայն որ Արդուրի հետ եկած էր՝ հացը մօրը տալու առեն զԱրդուր ցուցնելով ըսաւ . “ Այս հացը այս տղան գնեց մեզի համար :” Կինն Արդուրի երեսն ի վեր նայելով ըսաւ . “ Շնորհակալ եմ , դաւակա , Տէրն օրհնէ զքեզ , և քեզ շնորհէ յախտենալիս կենաց հացը :” Երկու տղայն այն տղայքներէն որ քիչ մը առաջ կու լային իրենց մօր անկողնոյն երկու կողմը , ուրախութենէն խայտալ սկսաւ , երբ հացը տեսաւ . իսկ փոքրը կը ջանար հացը յափշտակել : Արդուր այս ցաւալի տեսարանը տեսնելով չկրցաւ բռնել իւր արտասուքը , և հացը քանի մը կտոր ընելով աղայոց և անոնց մօրը բաժնեց : Կինը քիչ մը հաց ուտելէն ետքը աչուքները փակեց , և ձեռուքներովն երեսը ծածկեց որպէս թէ կ’աղօթէր : Արդուր այս խեղճ ընտանիքին ուրիշ ուտելիք հայթայթելու համար դուրս երաւ , և այն կողմերը բնակող բարեւեւեր փնտրելով մը տունն երթալով անոր պատմեց այն խեղճ ընտանիքին թշուառութիւնը , և այն փնտրելու կերակուր պատրաստելով զրկեց անոնց :

Արդուր իւր տունն ունէր կէս մէծ հախիթ զոր պարզեւ ընդունած էր հօրմէն ոչխարներուն խնամ տանելուն համար : Արդուր խորհեցաւ այս ստակը տալ այն աղքատ և թշուառ կնոջ , բայց գիտէր որ հայրը պիտի չհաճէր , քանզի խիստ մարդ էր և քիչ անգամ կ’ողորմէր աղքատաց : Սակայն

Արդուր իր հօրը կամաց հակառակ գործել ալ չէր ուզեր , ուստի հօրը քովն երթալով հարցուց . “ Հայր , կրնամ ուրիշ փոխ տալ այն կէս մէծ հախիթն զոր ինձ պարզեւ տրուի :” Հայրն ստակը ու-



րիշ փոխ տալու հաւանութիւն տրուաւ սա պայմանաւ որ ապահով տեղ մը տրուի որ չկորսուի : Այս խօսքին վրայ Արդուր ստակն առնելով այրի կնոջ տունը գնաց : Երեկոյն հայրը հարցուց Արդուրի թէ ի՞նչ ըրաւ ստակը : Արդուր ըսաւ թէ ստակը փոխ տուաւ այնպիսի աղքատ կնոջ մը որ անօթութենէ մեռնելու վտանգի մէջ էր : Այս խօսքին վրայ հայրը դժուարեւոր ըսաւ . “ Միթէ ինչ հրաման առիք ստակը այդպիսի կնոջ մը փոխ տալու , ետքը այն կնոջմէն ի՞նչ պիտի առնես , ստակն այնպէս փոխ չտրուիր :” Արդուր պատասխանեց . “ Հայր , ես ստակս ապահով անձի փոխ տուի ,” և զայս ըսելով բացաւ Սուրբ գիրքը և կարդաց սա համարը . “ Աղքատին ողորմութիւն ընողը Տէրոջը փոխ կու տայ , և Անկաանոր հատուցում պիտի ընէ” (Առակ ԺԹ. 17) : Արդուր այս համարը կարդալէն ետքը յարեց . “ Հայր , ես ըստակս փոխ տուի Տէրոջը , և Տէրը փոխարէնը պիտի հատուցանէ ինձ , “ Տէրը քեզի ի՞նչ հատուցում պիտի ընէ ,” ըսաւ հայրը : Արդուր պատասխանեց . “ Այո , ես Տէրոջը փոխ տուի , և Տէրը խոստացած է ինձ հատուցում ընել :” Հայրը սղուն այս պատասխանէն գոհ եղաւ , և ոչ միայն այլևս յուսահատական խօսք չըրաւ Արդուրի , այլև զրպանէն կէս մէծ հախիթ հանելով տուաւ անոր և ըսաւ . “ Տէրը քեզ ստակ չտար , ես ստակ տալու եմ :” Արդուր ստակը շնորհակալութեամբ ընդունեց հօրմէն և ըսաւ . “ Տէրն ինձ հատուցում ըրաւ աւելի շուտ քան զոր կը կարծէի , նաև բնու չէի յուսար թէ Տէրը դրամով պիտի օրհնէր զիս : Մարդոց սիրան Աստուծոյ ձեռքն է , արծաթ և ոսկի անոր են : Աստուած չարժեց նորա սիրան

ինձ այս ստակը տալու , և ես այս ստակը դարձեալ փոխ պիտի տամ Աստուծոյ :”

Արդուր բոլոր իր կենացը մէջ եղաւ բարեւեւեր և գըթած , և Աստուած բազում

ՋՕՐԱԻՌՆԵՐՆ
ՕԳՆԵԼՈՒ ԵՆ
ՏԿԱՐԱՅ

Եգիպտոսի բնակիչը շատ զարմանալի պատմութիւն մը կ’ընէին թռչնոց վրայ , բայց ընդհանրապէս չէր հաւատացուեր թէ այն պատմութիւնը ճշմարիտ էր : Մօտերս Գերմանացի գիտնականներէն ոմանք դատած են թէ այս պատմութիւնը ճշմարիտ է : Կ’ըսեն թէ երբ արազիլը հարաւային Եւրոպայէն կը գաղթեն , շատ մը փոքր թռչուններ իրենց կունակն առնելով կը տանին Միջերկրական ծովէն անդին : Այս ծովն այնպէս ընդարձակ է որ փոքր թռչունը չէն կրնար անոր վրայէն թռչելով անցնել , բայց արագիլներուն կունակը նստելով կը տարուին Եւրոպայի ցարա երկիրներէն Ափրիկէի ջերմագոյն երկիրները : Այս դէպքը սա օգտակար դասը կու տայ մեզ թէ զօրաւորներն օգնելու են տկարաց : Նոր աարի մը կը մտնենք , ուրեմն յիշենք արազիլն , և միշտ պատրաստ ըլլանք օգնել անոնց որ նեղութեան մէջ են և պէտք ունին օգնութեան :

Ամերիկայի Միսիսիպիոսի ընկերութեան կողմէն
Խմբագիր ձ. Բ. ԿԻՆԵ
Ֆիլադելֆիայի եղբայրացիներու ընկերութեան խան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱԿՈԲ ՊՅՈՅՆՅԱՆ